ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հուլիսի 2024 թվականի N 1137 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-Ի N 568-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մայիսի 27-ի «Անվճար կամ արտոնյալ պայմաններով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման կարգն ու շահառուներին ներկայացվող պահանջները սահմանելու մասին» N 568-Ն որոշման N 1 հավելվածի՝

1) 3-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) արտամարմնային բեղմնավորման իրականացման մեկ փորձ, հավելյալ սաղմերի ստացման դեպքում 4 սաղմի սառեցում՝ մինչև 6 ամիս պահպանմամբ.».

2) 3-րդ կետը 4-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ ենթակետով.

«5) ապասառեցված սաղմերի 2 հավելյալ տեղադրում արգանդի խոռոչ։».

3) 4-րդ կետում «Արտամարմնային» բառը փոխարինել «Մինչ արտամարմնային բեղմնավորումն իրականացվող պարտադիր հետազոտությունները (առաջին փորձի ժամանակ կատարված հետազոտությունների վաղեմության ժամկետը լրանալու դեպքում) և արտամարմնային» բառերով, «մասնակցությամբ» բառից հետո լրացնել «, ընդ որում, սույն դրույթը վերաբերում է նաև մինչև սույն հավելվածով սահմանված շահառուի կարգավիճակի ձեռքբերումը պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում արտամարմնային բեղմնավորման փորձ կատարած և այնուհետև շահառուի կարգավիճակ ձեռք բերած անձանց» բառերով.

4) 4-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4.1-ին կետով.

«4.1. Այն դեպքում, եթե անձն ունի սառեցված սաղմեր նախորդ արտամարմնային բեղմնավորման փորձից հետո, նա կարող է օգտվել արտամարմնային բեղմնավորման հաջորդ փորձից միայն սառեցված սաղմերի տեղադրման անհաջող փորձերից հետո։».

5) 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10. Անվճար կամ արտոնյալ պայմաններով վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներով տրամադրվող բժշկական օգնությունից և սպասարկումից օգտվելու իրավունք ունեն՝

1) 2 տարի և ավելի անպտղություն ունեցող (բացարձակ ցուցումների դեպքում՝ առանց 2 տարվա սահմանափակման)՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող կամ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված, ժամանակավոր պաշտպանության տակ վերցված, փախստական ճանաչված անզավակ կանայք, ովքեր պատկանում են 20-40 (ներառյալ) տարիքային խմբին, սույն հավելվածի 3-րդ և 4-րդ կետերով սահմանված ծավալներով, ընդ որում՝ 40 տարեկանում հաշվառվելու և վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառման ցուցումների առկայության դեպքում կինը պահպանում է ծրագրի շահառուի կարգավիճակը մինչև 42 տարեկան դառնալը.

2) 28-42 (ներառյալ) տարեկան Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող կամ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված, ժամանակավոր

պաշտպանության տակ վերցված, փախստական ճանաչված անզավակ կանայք՝ սույն հավելվածի 3-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով սահմանված ծավալներով.

3) մեկ երեխա ունեցող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող կամ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված, ժամանակավոր պաշտպանության տակ վերցված, փախստական ճանաչված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ամուսնությունը գրանցած (ճանաչված), 2 տարի և ավելի երկրորդային անպտղություն ունեցող (բացարձակ ցուցումների դեպքում՝ առանց 2 տարվա սահմանափակման) զույգերը, որոնցից կինը պատկանում է 20-36 (ներառյալ) տարիքային խմբին՝ սույն հավելվածի 3-րդ կետով սահմանված ծավալներով, ընդ որում՝ 36 տարեկանում հաշվառվելու և վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառման ցուցումների առկայության դեպքում կինը պահպանում է ծրագրի շահառուի կարգավիճակը մինչև 39 տարեկան դառնալը.

4) զինվորական ծառայության ընթացքում կամ զինվորական ծառայության ավարտից հետո զինվորական ծառայության հետ կապված պատճառական կապով զոհված (մահացած) որդու՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող կամ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված, ժամանակավոր պաշտպանության տակ վերցված, փախստական ճանաչված ծնողները՝ սույն հավելվածի 3-րդ և 4-րդ կետերով սահմանված ծավալներով, ընդ որում՝ կնոջ տարիքը սահմանվում է մինչև 42 տարեկանը, իսկ 41 տարեկանում հաշվառվելու և վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառման ցուցումների առկայության դեպքում կինը պահպանում է ծրագրի շահառուի կարգավիճակը մինչև 44 տարեկան դառնալը:».

6) 22-րդ կետի 3-րդ ենթակետից «, իսկ 10-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված բնակավայրերի բնակիչ հանդիսացող շահառու ամուսիններից մեկը՝ նաև տեղեկանք բնակության վայրից՝ մշտապես բնակվելու և տեղեկանք ոստիկանության բնակչության պետական ռեգիստրից՝ մշտական բնակության վայրում առնվազն մեկ տարի հաշվառված լինելու վերաբերյալ, ընդ որում՝ շահառու ամուսիններից մեկի հաշվառման և մշտական բնակության վայրերը

պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի նոյեմբերի 17-ի N 713 որոշման N 1 հավելվածով սահմանված ցանկին» բառերը հանել.

7) 22-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված (ճանաչված) ամուսնության մեջ գտնվելու փաստը հավաստող փաստաթուղթը՝ սույն հավելվածի 10-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված շահառուների դեպքում, իսկ սույն հավելվածով սահմանված այլ շահառուների դեպքում՝ միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված (ճանաչված) ամուսնության մեջ գտնվելու դեպքում.»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի օգոստոսի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

25.07.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ